

ներկայացնէ: Երբ, ժՖ. դարու սկիզբը, վանական Դանիէլ ուխտի երթալ ուզեց Մամբրէի կաղնիին, ըստոյզ է որ յիշեալ քրիստոնեաներուն դիմեց: Նշանաւոր բեւեկնի ծառին ամբողջական ոչնչացումէն վերջ նոյն քրիստոնէից մէջ աւանդութիւն մը ծագում առաւ: Իրենց բլուրէն ոչ հեռու՝ հովիտը իջնելով դէպի հիւսիս՝ կը գտնուի կաղնիներով ծածկուած բարձրութիւն մը, արդի Խիրպէթ Սիպթա կոչուածը: Այս կաղնէաստանին մէջ գիւրին էր գտնել հինաւուրց կաղնի մը՝ որ բեւեկնիէ մը աւելի յիշեցնէր աստուածաշնչական պատմութիւնները: Անգլիացի Seawulf, որ կը սիրէ տեղացիներուն ըսածները մէջբերել իր ըսածներուն հաստատութեան համար, 1102ին չի վարանիր ըսելութէ այն կաղնին՝ որուն տակ Աբրահամ կը կենար, երբ տեսաւ երեք մանկանց ճանապարհին գալը, տեղւոյն բնակիչներուն ըսածին նայելով՝ ան տակաւին կանանչ էր և տերեւազարդ, Քերրոնէն քիչ հեռու: Անգլիացի ուխտաւորէն չորս տարի վերջ, Դանիէլ վանական (1106) այցելութիւն կուտար նոր Մամբրէին: Հիւսիսէն գալով՝ ինքն ալ իջաւ հին ճանապարհը մինչև ստորոտը բլուրի մը՝ ուրկէ վեր ելաւ, վասն զի հոն էր նուիրական կաղնին: Ծառին շուրջը՝ բնականօրէն միացած ժայռը կը կազմէր սպիտակ յատակ մը՝ նման եկեղեցիի մը յատակին: Այս ուխտաւորին մանրամասն նկարագրութեան համաձայն, ծառը այս թըլականին՝ համեմատաբար քիչ հինցած էր: Քերրոնէն իր հեռաւորութիւնն էր երկու վերստ, այսինքն 2140 մէթր, ինչ որ էլ-Սալիլէն Խիրպէթ Սիպթայի հեռաւորութիւնն է: Այս նոր տեղը լատին թագաւորութեան ժամանակ, չի թուիր մեծ յաջողութիւն ունեցած ըլլալ: Անգամ մը Իսլամները երկրին տիրելէ վերջ,